ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Նոյեմբերի 4-ին, թ. 663. Սինոդը լսելով Անիի վանահայր Միքայէլ վարդապետի անցեալ սեպտեմբերի 16-ի խնդիրը նրա նիւթական կացութեան մասին, որոշեց. աչքի առաջ ունենալով յիշեալ վարդապետի անհրաժեշտ ծախքերը բազմաթիւ այցելուների ընդունելութեան համար՝ բացի նրա ամսական 26 ռուբ. ռոճկից և «Տայլարի» 15 դես. հողի արդիւնքից, տալ նրան ըստ առաջնոյն ցորեն, գարի, իւղ և պանիր Կարսի վիճակից ժողոված պտղի արդիւնքից։

Նոյեմբ. 4-ին, թ. 670. Սինոդը որոշեց. համաձայն Երևանի փոխ-թեմական Տ. Խորէն եպիսկոպոսի անցեալ հոկտեմբերի 25 ի, թ. 1497 յայտարարութեան, թոյլ տալ Երևանի «Ջրանցք» ընկերութեանը աթոռապատկան «Գետարգելի» հողերովն անցկացնել Ջրանցքի առուն այն պայմանով, որ ընկերութիւնը ապահովագիր տայ Սինոդիս, թէ ժամանակին յիշեալ հողի համար պարտաւոր է վճարել գնահատող յանձնաժողովի որոշած արժէքը։

Նոյեմբ. 4-ին, թ. 675. Սինոդը լսելով Հին-Նախիջևանի Հայոց Հոգևոր կառավարութեան անցեալ սեպտեմբերի 10-ի, թ 1364 յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ Հին Նախիջևանի Հոգևոր Կառավարութեանը ծախսել վիճակային արդիւնքից 150 ռուբլի կառավարութեան Դիւանը կարգի բերելու համար, պատուիրելով կարգաւորութեան գործն աւարտելուց յետոյ նոր մինչորդութիւն յարուցանել անպէտք գործերը ոչնչացնելու համար։

Նոյեմբ. 5-ին, թ. 678. Սինոդը լսելով Կուբանի նահանգի Եյսկ քաղաքի ս. Աստուածածին եկեղեցու ծխատէր Մարգարէ աւագ քահ. Սուքիասեանի տարեւոյս յուլիսի 4-ի թ. 63 յայտարարութիւնը, որով ներկայացնում է Սինոդիս 28 ռուբլի յօգուտ Ադանայի հայ տառապեալների, հանգերձ նուիրատուների ցուցակով, որոշեց. 28 ռուբլին

ուղարկել Կ. Պոլսի պատրիարքին, յանձնարարելով վերջնիս հասցնելու ըստ պատկանելոյն, իսկ նուիրատուների ցուցակն ուղարկել «Արարատի» խմբագրութեանը, պատուիրելով տպագրել այն «Արարատի» մէջ և գոհունակութիւն յայտնել նուիրատուներին։ (Ծանօթ. նուիրատուների ցուցակը տպուած է Արարատի Նոյեմբ. համարում, եր. 1112—1113-ում)։

Նոյեմբ. 11-ին, թ. 687. Սինոդը որոշեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին ուղարկել Երևանի արքունի գանձարանը 69 ռուբլի 43 կոպ. ջրային հարկ, Աթոռապատկան «Գետարգել» կալուածի համար։

Նոյեմբ. 11-ին, թ. 693. Սինոդը որոշեց. տալ երկրաչափ Ի. Մարուաշուիլուն երեք հարիւր ռուբլի Եղուարդ գիւղի հողաբաժանութիւնը կատարելու համար իբրև վարձատրութիւն։

Նոյեմբ. 11-ին, թ. 694. Սինոդը լսելով վանական կառավարութեան ամսոյս 5-ի, թ. 467 յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ նոյն կառավարութեան վաճառել Մայր Աթոռի շտեմարանից 100 խալ. ցորեն Վաղարշապատ գիւղի բահրայից ընթացիկ գնով և գոյացած դրամը մատուցանել Սինոդիս։

Նոյեմբ. 11-ին, թ. 695. Սինոդը լսելով Երևանի կոնսիստորիայի անցեալ հոկտեմբերի 30-ի, թ. 7557, որոշեց. պատուիրել նոյն կոնսիստորիային նոր աճուրդ նշանակել «Զօրավարի» այգին վարձու տալու համար, և աճուրդախօսութեան արդիւնքը ներկայացնել Սինոդիս ի հաստատութիւն։

Նոյեմբ. 11-ին, թ. 696. Սինոդը լսելով Երևանի կոնսիստորիայի անցեալ հոկտեմբերի 30-ի թ. 7551 յայտարարութիւնը, որոշեց. պատուիրել նոյն կոնսիստորիային Գետարգելի հողերը վարձու տալու համար նշանակել նոր աճուրդ նախկին պայմաններով, սկսելով աճուրդախօսութիւնը այժմեան վարձագնից և աճուրդախօսութեան արդիւնքը մատուցանել Սինոդիս ի հաստատութիւն։

Նոյեմբ. 12-ին, թ. 707. Մինոգը լսելով Նորին Սրբութեան նոյն ամսի 4-ի, թ. 2403 կոնդակը, ի Տէր հանգուցեալ Գրիգոր արքեպիսկոպոս Գառնակերեանի մահից յետոյ մնացած դրամի և գոյքի մասին, որոշեց. նախ՝ պատուիրել Մ. Աթոռի գանձապահին մուտք գրել Մ. Աթոռի տումարում 1003 ռուբլի կանխիկ դրամը և չորս հազար ռուբլու թ. 54353—1363 տոմսը, երկրորդ՝ հանգուցեալի գոյքը տեղաւորել գանձարանին կից սենեակում։

Նոյեմբ. 18-ին, թ. 716. Մինոգը որոշեց. պատուիրել Վանական կառավարութեան աճուրդ նշանակել Փարաքարի Աթոռապատկան այգին վարձու տալու համար, վեց տարի ժամանակով, սկսելով աճուրդախօսութիւնը 350 ռուբլուց։

Նոյեմբ. 19-ին, թ. 731. Մինոգը լսեց Վանական կառավարութեան նախագահ Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի նոյն ամսի 12-ի յայտարարութիւնը և որոշեց. պատուիրել Վանական կառավարութեանը չափել տալ երկրաչափ Մարուշուիլու ձեռքով Մ. Աթոռի սեփական հողերը Վաղարշապատում։ Այդ աշխատութեան համար հատուցանել երկրաչափին դեսեատինին 30 կոպէկ։

Նոյեմբ. 19 ին, թ. 732. Մինոգը լսեց Երևանի Կոնսիստորիայի նոյն ամսի 6-ի թ. 7702 յայտարարութիւնը Դուին գիւղի եկեղեցու նորոգութեան մասին, որոշեց. թոյլ տալ Դուին գիւղի ծխականներին ծախսել եկեղեցու նորոգութեան վրայ 445 ռուբլի եկեղեցու գրամագլխից, ծխական ժողովի որոշման համաձայն։

Նոյեմբ. 19-ին, թ. 733. Մինոգը լսելով Նորին Սրբութեան նոյն ամսի 6-ի, թ. 2429 կոնդակը, որոշեց. Արդահանի Էմմանուէլ քահանայ Դեմիրջոզլեանին ազատ համարել քահանայութեան կարգից և իսպառ արձակուած հոգևոր կոչումից։ Վճռիս կատարման համար հրաման տալ Երևանի կոնսիստորիային և տեղեկացնել Կարսի և Տփխիսի նահանգապետներին։

Նոյեմբ. 19-ին, թ. 735. Մինոգը լսելով Աստրախանի

Կոնսիստորիայի տարուցս օգոստոսի 27-ի, թ. 3210 յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ Արմաւիրի եկեղեցու երեսփոխանին ծախսել եկեղեցու դրամագլխից 5000 ռուբ. ծխական ժողովի որոշման համաձայն՝ նորակառոյց եկեղեցու շինութեան վերայ՝ շինութեան հոգաբարձութեան ձեռքով։ Վճռիս կատարման համար հրաման տալ Աստրախանի Կոնսիստորիային։

Նոյեմբ. 19-ին, թ. 736. Մինոգը լսելով Վանի Հայկաղեան Կենդրոնական և Սանդխտեան վարժարանների նախագահի հոկտեմբեր 13-ի խնդիրը Դ. Սերեբրեկեանի կտակած գումարի տոկոսների մասին, որոշեց. այդ կտակագումարի սոյն տարուայ տոկոսները 456 ռուբլին փոխադրել Վանայ Առաջնորդարանի անունով, Տփխիսի առևտրական բանկի միջոցով և փոխադրութեան տոմսը ուղարկել Վանայ առաջնորդարանին։